



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՍՍՈՒ ՊԵՐԱԳԻՈՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ճնծովյան օրերը է ապրում հայ ժողովուրդը ՍՍՈՒ Պերագույն Սովետի ընտրությունների կապակցությամբ: Հայաստանի քաղաքներում, ավաններում, գյուղերում տեղի են ունենում ընտրողների բազմաթիվ ժողովներ, ուր աշխատավորությունը (ՍՍՈՒ Պերագույն Սովետի դիպուկատուությամբ)

թվան թեկնածուներ է առաջադրում հայ ժողովրդի լավագույն զավակներին:

Միաժամանակ ՍՍՈՒ Պերագույն Սովետի դեպուտատության թեկնածուները ջերմ հանդիպումներ են ունենում իրենց ընտրողների հետ:

ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Հայկական ՍՍՈՒ Ջրային տնտեսության ժողովմաստը վերսկի է ներքին Ջանդիկից սկսվող և Քասախ գետի ավազանը հասնող ջրանցքի կառուցումը, որի համար բաց է թողնված 27 միլիոն տոբլի: Ջրանցքը սկիզբ է առնում Ստալինի անվան ջրանցքից, որտեղից ջուրը գլխամասի ակվեդուկով անցնելու է գետի աջ ափը, ապա Մալաթիայով, 4-րդ գյուղի վերևում ուժի առաջը գլուխի դռերով, Այգեանտանի վերին մասով թափվելու է Քասախ գետի ավազանը: Ջրանցքը ուղեգիծ է 9.000 հեկտար հողի:

Երևաբարության վրա այժմ աշխատում են էլմիածնի, Աշտարակի և Բերիայի ջրբանների կոլխոզներին: Պատրաստ է այն ջրանցքը, որով ջուրը խողովակի մեջ է հոսելու Ստալինի անվան Երևանի առաջին գետի ջրանցքից:

Սկսվել է ակվեդուկի կառուցումը, որը ջրի մակերեսից 26 մետր բարձր է և ունի 120 մետր երկարություն: Ակվեդուկի նախագիծը կազմել է երկտասարդ ճարտարապետ Գ. Նոյանը, որը և դեկտեմբերին է կառուցման աշխատանքները: Ակվեդուկը պատրաստ կլինի 1946 թվի մայիսին: (229)

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

ՍՍՈՒ Ժողովմաստիկան կից բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեի բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը ֆիլոլոգիական դիստիկցիաների դոկտորի աստիճան է ընդունել Երևանի Վ. Մ. Մուրտուզի անվան Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի դեկան Մ. Մ. Մկրյանին:

Գիտնականի Շրիգորի Նարեկացի դոկ-

տորական դիսերտացիան նվիրված է 10-րդ դարի հայ բանաստեղծի ստեղծագործությանը: Լայնորեն օգտագործելով պետական արխիվներում գտնվող հայկական հին ձեռագրերը, հեղինակը տվել է Նարեկացու ստեղծագործությունների կապիտալ ուսումնասիրություն, որն առաջինն է գրականության մեջ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՈՒ Գիտությունների Ակադեմիայի Պետական պատմական թանգարանի կազմակերպած արշավախմբերը ավարտեցին 13-րդ դարի Հաղպատի, 10—13-րդ դարերի Սանահնի, 13-րդ դարի Սաղմոսա-

վանքի, 5-րդ, 13-րդ դարերի Հովհաննավանքի, 13-րդ դարի Ղոջավանքի և 6-րդ դարի Ավանի հնավային հուշարձանների ուսումնասիրությունը:

Պետական պատմական թանգարանը ա-

ուսման անգամ ձեռնամուխ է լինում բրդոյուրների սերիայի հրատարակման, որը վերաբերում է հնության հուշարձաններին և նրանց արձանագրություններին:

Ավանի հուշարձանի վերաբերյալ նյութերը արդեն հրատարակվել են Կ. Ղաֆադարյանի (ՄՍՍԻ ժողովրդագիտության կից Հայ եկեղեցու Գործերի Մովետի, անգամ) բրդոյուրում, որը կոչվում է «Ավանի երկրագիտական կրիպտոգրաֆիկ արձանագրությունը»: 2. Ջանիուրդյանը տպագրության համար պատրաստել է նյութեր Ղոշավանցի մասին: Լույս տեսած և տպագրության համար պատրաստվող բրդոյուրներում տրվում են

պատմական ակնարկ, ճարտարապետական շարժումներ և արձանագրություններ:

Հայկական ՄՍԻ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, զգալիորեն ընդարձակվում են Պետական պատմական թանգարանի ազգագրական բաժնի աշխատանքները:

Ազգագրական տեղեկություններ և նյութեր հավաքելու համար պրոֆեսոր Լիսիցյանը կաշմել է ազգագրական տեղեկությունների նկարագրության վերաբերյալ ընդարձակ հարցաթերթ, որով տեղեկութե պետք է օգտվին ուսումնասիրողները:

1946 թվին թանգարանում կկազմակերպվի մշտական ազգագրական ցուցահանդես:

ՍՍՍՐԽՅԱՆ ՄՐՁԱՆԱԿԻ ԼՈՒՌԵԱՆԵՐԸ

1943—1944 թ. թ. գիտական նշանավոր աշխատությունների, գյուտարարությունների, արտատպական աշխատանքի մեթոդների արժանատի կատարելագործումների և արվեստի ու գրականության ասպարեզի լավագույն երկերի համար ՄՍՍԻ ժողովրդական համալսարանների Մովետի 1946 թվի հունվարի 26-ի որոշմամբ Մտալինյան մրցանակներ են շնորհված մեր երկրի գիտնականներին, արտադրության նույնատոններին, կուլտուրիկներին, գրողներին, պոետներին և արվեստի աշխատողներին:

Իրենց աշխատություններով սովետական գիտությունը և կուլտուրան հարստացրած Մտալինյան մրցանակի լաուրեատների նշանավոր անունների թվում նշված են նաև հայ ժողովրդի պանծալի գավակները և Հայկական ՄՍԻ գիտության, գրականության ու արվեստի ներկայացուցիչները:

Մալխոսի ու Իվթուման են գիտությունը և արվեստը ՄՍՍԻ-ում և նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանում:

Գերմանական հրոսակների ավազակային արշավանքները չկարողացան դադարեցնել սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքը. ընդհակառակը սովետական գիտնականները և արվեստագետները ոգեվորված Հայրենական Մեծ պատերազմի բարձր և վեճ գաղափարներով կրկնապատկեցին իրենց ուժերը և օգնեցին Հայրենիքի ռազմական հզորության ամրապնդմանը քանզի նախկին գիտության ու կուլտուրայի զարգացման համար Այդ մասին են վկայում Մտալինյան մրցանակների շնորհումը գիտության, տեխնիկայի, արվեստի ու գրականության գործիչներին:

Մտալինյան մրցանակներ շնորհելը սահմանվել է 1939 թվի դեկտեմբերի 20-ին ի պատիվ Ի. Վ. Մտալինի ծննդյան 60-ամ

յակի և մինչ այժմ շնորհվել է շուրս անգամ: Մրցանակների առաջին շնորհումը տեղի է ունեցել 1941 թ. մարտին, իսկ երկրորդը՝ Հայրենական պատերազմի տարիներին 1942 և 1943 թ.: Մտալինյան մրցանակի լաուրեատի պատվավոր կոչում է շնորհված արդեն գիտական ու տեխնիկայի 1686 և արվեստի ու գրականության 502 գործիչների. դրանցից 21 հոգի թրրորդ, իսկ 4 հոգի չորրորդ անգամ են արժանացել մրցանակի: Չորրորդ անգամ մրցանակների շնորհման ժամանակ, որը տեղի ունեցավ 1946 թվին, լաուրեատի կոչում արվեց գիտության ու տեխնիկայի 624 և արվեստի ու գրականության 155 գործիչների, դրանց թվում մի շարք հայ գիտնականներ ու արվեստագետներ: Հայ գիտնականներին և արվեստագետներին Մտալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչում շնորհելը հպարտության ու հրճվածության հզոր ուժ է լցնում ամեն մի հայրենասեր հայի սիրտը, որովհետև նա վկայում է հայ մշակույթի, հայկական կուլտուրայի աննախընթաց վերելքի մասին:

Մտալինյան մրցանակի լաուրեատի կոչում է շնորհված ակադեմիկոս Ս. Մալխասյանին. իր հույակապ հայագիտական աշխատության համար:

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին երրորդ անգամ է շնորհվում Մտալինյան մրցանակ. տաղանդավոր կոմպոզիտորի անունը հայտնի է նաև Միության սահմաններից դուրս ամբողջ եվրոպական աշխարհում: Անվանի երաժշտուհի Սովետական Հայաստանի 25-ամյա տոնակատարության կապակցությամբ Արամյան աչքիված ժամանակ: Եղավ նաև էջմիածնում և զբոսը ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ իր երաժշտական իրերով և հայ եկեղեցա-

կան երաժշտության տարրերի օգտագործման խնդիրների շուրջը: Ստալինյան մրցանակ է շնորհվել նաև մի քանի ակադեմիկոսների և երաժշտագետ հայր Կոմիտասի անունը կրող կվարտետին: Կոմիտասի անվան կվարտետը ողջ Միության մեջ երկրորդ կը-

վարտետն է, որ արժանանում է Ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչմանը: Այս բոլորը հայկական երաժշտական կոմպոզիտորի, երաժշտական ստեղծագործ կադրերի աճի ցուցանիշ է հանդիսանում:



Կոմիտասի անվան կվարտետը (ձախից-աջ) Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբեյան, Ս. Ասլամազյան, Մ. Տերյան

Ստորև տալիս ենք 1946 թվին Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչում շնորհված հայ ժողովրդի զափակների անունները:

Ստալինյան մրցանակներ են շնորհված.

Հիլիկո-մաթիսյանի անվան գիտությունների ասպարեզում գիտական նշանավոր աշխատությունների համար երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված, 100 հազար ռուբլու չափով՝

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՄԱՐԱԶՈՒԹՅԱՆՆԻՆ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Լենինգրադի Պետական համալսարանի պրոֆեսոր, — աղտոր միջավայրում լուսի տարածման նոր տեսություն ստեղծելու համար, որը շարադրված է 1942—1944 թվերին հրապարակված «Պոտոր միջավայրում լուսի տարածման հաշվարկման նոր եղանակ», «Մոլորակների մթնոլորտների միջոցով լուսի տարածման մասին», «Պոտոր միջավայրի

միջոցով լուսի դիֆուզիայի արտացոլման հարցի շուրջը» աշխատություններում:

Պատմա-ֆիլոզոֆիական գիտությունների ասպարեզում գիտական նշանավոր աշխատությունների համար առաջին աստիճանի մրցանակ է շնորհված 200 հազար ռուբլու չափով՝

ՄՏՏՓԱՆ ՍԱՐԳՍԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, — 1944 թվին հրապարակված «Հայ լեզվի բացատրական բարդության» կապիտալ աշխատության համար:

Նշանավոր գյուտարարությունների և արտադրական աշխատանքի մեթոդների արժանատի կատարագործողների համար Ստալինյան մրցանակներ են շնորհված:

Առաջին աստիճանի մրցանակ 150 հազար ռուբլու չափով՝

ՀԱՄՈ ՍԵՐԳԵՅԻ ՅՈՒՅԱՆԻՆ՝ սոցիալիստական աշխատանքի հերոս, Ի. Վ. Ստալինի անվան գործարանի դիրեկտոր, — տեխ-

նորոգիայի արժատական կատարելագործման ու թնդամթննրի արտադրության բարձր արտադրողական անընդհատ մեթոդ կազմակերպելու համար, որոնք ապահովել են թնդանոթների արտադրության զգալի ավելացումը, միաժամանակ կրճատելով մետաղի ծախսը և բանվորական ուժի պահանջը:

Երկրորդ աստիճանի մրցանակ, 100 հազար ռուբլու շափով՝

ԳՈՐԻԳՆ ՄԿՐՏՁԻ ՄՈՒՍԻՆՅԱՆԻՆ՝ Ն. Ե.
Ժուլյուսկու անվան կենտրոնական անրոհիկոնդիտմիկական ինստիտուտի պրոֆեսոր, ինքնաթիռների անթոդիկոնդիկական փորձարկումների համար նոր սարքեր ըստեղծելու համար:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՁԻ ՏՆՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ՝ Ն. Լ.
№ 153 գործարանի ղեկավար ինժեներ, — ինքնաթիռային կոնստրուկցիաների զոդման տեխնոլոգիան արժատապես կատարելագործելու համար, որն ապահովել է ինքնաթիռների արտադրության զգալի ավելացումը:

Մրրորդ աստիճանի մրցանակ, 50 հազար ռուբլու շափով՝

ԱՆԴՐԵՅ ԱՐԿԱԴԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ՝
Հեմատոլոգիայի և արյան փոխներարկման կենտրոնական ինստիտուտի դիրեկտոր, — չոր պլազմայի և արյան չոր շիճուկի ըստեղծման մեթոդները մշակելու համար, որոնք մեծ գործադրություն են զտել բժշկական պրակտիկայում, հատկապես ռազմաճակատային բուժօգնականներում:

ԱՎԵՏԻԲ ԼՈՒԿՅԱՆՈՎԻՉ ՄԱՋԼՈՒՄՈՎԻՆ՝
Ռաժոնի Սեկեցիոն կայանի շաքարի ճակնդեղի սեկեցիայի բաժնի վարիչ, — շաքարի ճակնդեղի նոր, շատ բերքատու «Ռաժոնսկայա 1537» սորտը բուծելու համար, որը մեծ շաքարայնություն ունի:

ԼԵՎՈՆ ՆԻԿԻՏԻ ԳԱՋԵՋՅԱՆԻՆ՝ ԱՎԻԱԳԻՐՆ
Արդյունաբերության ժողովրդատի ղեկավար մետալուրգ. — ձուլման հատուկ մեքենաներ ստեղծելու համար, որոնք սպահովում են արտադրության զգալի ավելացում և բարելավում են ավիացիոն մոտոռենների դետալների որակը, միաժամանակ մեծ չափով խնայելով նյութերը և իշեցնելով արտադրանքի արժեքը:

Երաժշտության ասպարեզում նշանավոր աշխատության համար առաջին աստիճանի մրցանակ է շնորհված 100 հազար ռուբլու շափով՝

ԱՐԱՄ ԵՂԻԱՅԻ ԽԱՋԱՏՐՅԱՆԻՆ ՌԱՅՍՈՒ
և Հայկական ՍՍՌ Արվեստի վաստակավոր պրոֆիչ, № 2 Կոմիտեիայի համար:
Երկրորդ աստիճանի մրցանակ, 50 հազար ռուբլու շափով՝

ՆԻԿՈԼԱՅ ԿԱՐՊԻ ՉՏՐԵՐՋԻՆԻՆ կոմպոզիտոր, լարային կվարտետի համար:

Երկրորդ աստիճանի մրցանակ, 50 հազար ռուբլու շափով, շնորհված է Կոմիտեի անվան կվարտետին, որի կազմի մեջ մտնում են Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչներ ՍԵՐԳԵՅ ՉԱՔԱՒԻ ԱՍԼԱՄԱՋՅԱՆԸ, ՆԻԿԻՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՍԱՐՅԱՆՅԱՆԸ, ԱՎԵՏ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՆՐ-ԳԱՐԻՆԵՅԱՆԸ ԵՎ ՄԻԲԱՅԵԼ ՆԻԿԻՏԻ ՏՆՐՅԱՆԸ:

Օպերային արվեստի ասպարեզում առաջին աստիճանի մրցանակ է շնորհված, 100 հազար ռուբլու շափով՝

ՀԱՅԿԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԳԱՆԻՆԵՅԱՆԻՆ
ՍՍՌԻ ժողովրդական արտիստուհի, Երևանի Օպերայի արվեստի անվան օպերայի և բալետի լենինի շքանշանակիր թատրոնում ճիշտ Սուսանին՝ օպերայում Անտոնիդայի և Շուգենոտների՝ օպերայում Մարգարիտա Վալուայի դերերը կատարելու համար:

